ՈՒՍՏԻԱՆ.– Կանգնի տեղդ, կանգնի:

ՆԱԶԱՐ.– Տո, կնիկմարդը տղամարդ ծեծի՞… էդ եղաւ մարդկութի՞ւն… (Փախչում է մտնում կամի տակը։ Գլուխը դուրս հանելով) Կա՛ց, ո՞ւր ես փախչում, գալի՛ս եմ: Հրես եկա, անզգամ կնիկ… Դեսը տուր դագանակը:

ՈՒՍՏԻԱՆ.– Դո՛ւրս արի, գլուխդ ջարդեմ, սիրտս հովանա: Դո՛ւրս արի:

ՆԱԶԱՐ.– Դուրս չեմ դա: Խօսքս խո՛սք է:

ՈՒՍՏԻԱՆ.– Ո՞նց թէ դուրս չես գա:

ՆԱԶԱՐ.– Ես տղամարդ եմ. խօսքիս տէրն եմ: Դուրս չեմ գա:

ՈՒՍՏԻԱՆ.– Հա՛, դէ որ տղամարդ ես՝ կաց էդ ծակուռում: Հողե՛մ պարծենկոտ գլուխդ: (Ետ է քաշւում։)

ՆԱԶԱՐ.– (Գլուխը դուրս հանելով։) Դագանակը տեղը դիր, թէ չէ դուրս կգամ:

ՈՒՍՏԻԱՆ.– Դո՛ւրս արի (Հարձակուելով Նազարի վրայ։)

ՆԱԶԱՐ.– (Գլուխը ներս է տանում։)

ՈՒՍՏԻԱՆ.– (Նստում է տեղը։)

ՆԱԶԱՐ.– Կնիկ, դագանակը տեղը դիր: Բնութիւնս վատ է: Վախում եմ արիւնը գլուխս տա, վեր կենամ ջարդեմ քեզ: Դրա համար եմ ծակուռը մտել: Ուզում ես, որ գեղամիջում ասեն, թէ կնկա վրայ ձե՞ռ եմ բարձրացրել: (Միջոց) Դագանակը տեղը չե՞ս դնում: Լա՛ւ: Դէ սրանից դենը հերն անիծեմ էն մարդու, որ իր խօսքը գետնով տայ: Կա՛ց էդտեղ ու սատկի՛: Դուրս չե՛մ գա: (Գլուխը կոխում է ծակուռը։ Միջոց։ Ուստիանը դագանակը վար է դնում։ Նազարը գլուխը հանելով) Դագանակը տեղը դիր, չարանում եմ:

ՈՒՍՏԻԱՆ.– Դագանակը տեղն է:

ՆԱԶԱՐ.– Դե՛սը տուր:

ՈՒՍՏԻԱՆ.– Արի ա՛ռ,

ՆԱԶԱՐ.– (Տեսնելով վայր դրած դագանակը եւ քաջալերուելով) Հերսից տրաքուելո՛ւ եմ: Նա՛լլաթ չար սատանին: Վախենում եմ մի վնաս տամ: Անզգա՛մ կնիկ: (Դուրս է վազում ծակուռից, բայց հանգիստ մօտենում է հացի սուփրին) Լա՛ւ, ես կռուի գլուխ չունիմ: (Նստելով) Մենք ցեղով տղամարդ ենք, կնկայ վրայ ձեռք չենք բարձրացնի: (Գդալը վերցնում է եւ շարունակում է ուտել։) Մի բան լինես՝ վնաս չունի, թէ չէ ես կթողնե՞մ, որ վրաս դագանակ վերցնես: Ո՞ւր է, ահից մի սար էլ չես գալիս, որ տեսնես ոնց եմ աւազակների գլուխը ֆռռացնում: Թէ չէ տան